Այս խնդիրը, Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ մեր ու մեր դրացիների փոխ-յարաբերութիւնը, առանձին նիւթեր են, դուրս՝ ներկայ յօդուածի շրջանակից: Հայ ազգային քաղաքականութիւնը պէտք է հիմնուի միայն եւ միայն իր սեփական՝ ոյժերի, մեր երկրի իրական պայմանների վրայ, հարկաւ օգտագործել ջանալով օտար ազդակները:

Դժբախտաբար դառն իրականութիւնը ա՛յն է, որ դեռ այսօր էլ օտար ոյժերն են շարունակում մեզ օգտագործել՝ յօգուտ իրենց եսական շահերի, պառակտելով մեր ազգային ճակատը: 1918–1920–ին նրանք նոյն այդ նպատակով ստեղծեցին «երկու Հայաստաններ»ի խնդիր, ընդդէմ Հայաստանի առաջ քշեցին Կիլիկիան ու «Հարկական Օճախը», Հայաստանի քաղաքական ներկայացուցչութեան կից ստեղծել տուին եւ պաշտպանեցին մի երկրորդ՝ ա. կ. «Ազգային Պատուիրակութիւն», լարեցին նրանց իրար դէմ, մեր ձեռքերով իրենց համար շաղանակներ հանեցին կրակի միջից, հերթով ու միասնաբար դաւեցին ու դաւադրեցին ինչպէս իրար, այնպէս էլ, մի՛շտ ու հանապազ, մեր արիւնաքամ ժողովուրդի դէմ: Անգամ այսո՛ր նրանք շարունակում են իրենց հայասպան դերը նրանով, որ օրինակ ամերիկեան «Հայասէր» միսիոնարների ու հայ մարդկանց ձեռքով խլել են ուզում արտաքին ճակատի վրայ մեր ձեռքին մնացած փոքրիկ դէնքերն իսկ:

Միւս կողմից՝ կարմիր պատմուճան հագած Ռուսաստանն է շարունակում իր թմբուկը զարնող հայ բոլշեւիկների ձեռքով Հայաստանը օգտագործել իր արտաքին նպատակների համար: Աւելին դեռ: Միջնորդապէս կամ անմիջապէս նա որոմներ է ցանում արտասահմանի հայութեան մէջ եւ որպէս կամազուրկ խաղալիքներ գործածում ոչ միայն համայնավար հայերին, այլ եւ դաշնակցական բուրժուազիան: Վերջին հաշուով՝ Մոսկուայի ձեռքում չտեսնելու համար այդ դաւադրութեան կծիկը՝ կոյր պէտք է լինել եւ կամ անդէտ՝ քաղաքական տարրական հարցերում: Երեւանի եւ Թիֆլիսի քաղաքական ճամբան եւս Մոսկուայի վրայով է անցնում: Աչքաթող անելու չէ՛ երբեք այս տարրական ճշմարտութիւնը:

Ամփոփենք: Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը մեր ազգային քաղաքականութեան կէտ-նպատակն է:

Այդ նպատակը հետապնդող միակ իրական եւ վստահելի ոյժը Հայաստանի ժողովուրդն է: Վերջինիս իրական կարողութեանը համապատասխան, տանելի պիտի լինի հայ ազդ. քաղաքականութիւնը՝ իր բոլոր փուլերում, որ հանդրուաններո՛վ միայն կարող է զարգանալ:

Արտասահմանի հայ հատուածները օժանդակողի դեր միայն խաղալ կարող են, յատկապէս նրանք, որոնք ո՛չ միայն զգացումով, այլ եւ ծագումով ու մօտիկ անցեալով, ինչպէս նաեւ ուրիշ թելերով անխզելիօրէն կապուած են Հայաստանի հետ:

Այդ տարրերը ներկայիս արտասահմանում դեգերող մեր աշխատաւո՛ր, Հայաստանցի զանգուածներն են, որոնք առաջի՛ն հերթին իրենց բազուկը եւ միտքը պատրաստ են ի սպաս դնելու հայրենիքին:

Գաղութահայ բուրժուազիան, որ մեծամասնութեամբ գաղութածին է եւ մի խոշոր չափով օտարացա՛ծ շահերով ու զգացումներով, նիւթապէս եւ մշակութօրէն միայն կարող է օգտակար լինել: Բայց նա անտարբերի՛ դերում է հանդէս գալիս յաճախ, երբեմն մինչեւ իսկ վնասակա՛ր դիրք է բռնում հանդէպ Հայաստանի եւ հայ ազդ. քաղաքականութեան՝ իր գործո՛վ, հակառակ իր խօսքերի: Օտար դիւանագիտութեան ձեռքին շարունակել խաղալիք մնալը, արտասահմանի ազգային դրամագլուխների փոխադրութիւնը Հայաստան արգիլելը եւայլն, փաստեր են ասածներիս:

Ազգային ճակատի հաստատումը հրամայական պահանջ է: Արտաքին, օտար ոյժերը կարող են, նայած պայմաններին, օգտակար կամ վնասակար լինել մեր ազդ. քաղաքականութեան համար: Վերջինս պէտք է ուշադիր հետեւի նրան եւ յօգուտ իր ուղղել ջանայ այն:

Վճռական նշանակութիւն ունի, մեր դատի համար, վերջապէս, նաեւ մեր ու մեր հարեւանների փոխ-յարաբերութեան կարգաւորումը:

(Վերջ)